Ծուշանիկ Կուրղինյան

Բանվորի երգը

Ես ծնվել եմ մութ խրճիթում մշտաթաց .
Աղքատ կյանքի խոպանացած հովիտում,
Ուր որ քաղցը մանուկ օրից գրկաբաց
Չոր ձեռքերով վատուժ կյանքս էր շփշփում:

Ու տալիս էր նա ինձ այնքան կերակուր,
Որ չմեռնեմ ու չփախչեմ իր գրկից,
Գիշեր-ցերեկ ինձ հսկում էր նա անլուր,
Հյուսում շղթա տանջանքների օղակից:

Թոթով լեզուս նա բաց արեց առաջին
Վիրոտ կյանքի տառապանքի հևումով,
Վաղ վշտերի սափոր շինեց իմ հոգին
Ու լցրեց կսկիծներից մեծ թափով:

Գիշերները անքուն աչքով լալագին
Մատաղ կյանքիս ցուրտ խորանի մոտ չոքած,
Մոռացվելով փարվում էի ցնորքին՝
Ու քուն մտնում հոգնած մտքով ու քաղցած:

Երբեմն հոգիս թրթռում էր, սլանում
Դեպի եթեր՝ աստղերի մոտ հուսալով,
Ուր որ այնքան ջինջ է, անվիշտ անպատում,

Ուր որ աստված մոտ է այնքան իր գահով:

Զարթնում էի վաղ փայտացած մատներով
Անկուշտ քամու ու կարիքի ոռնոցից,
Որ բախում էր դուռս սուր-սուր ճանկերով,
Կամ ներս մտնում խարխուլ պատե ծերպերից:

1906 թ .